

Բաղայան Մ. – Գեղակաղեմիայի նվիրատվությունը Ազգային պատկերասրահին –
թերթ, «Ազգ», Ե., 20.03.2010

Երեկ՝ մարտի 19-ին, Հայաստանի ազգային պատկերասրահի եւ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի կենսագրության հիշարժան օրերից մեկը գրանցվեց: ՀԱՊ-ի հավաքածուն հարստացավ հայ անվանի գեղանկարիչներ Վանո Խոջաբեկյանի՝ 12 եւ Սեդրակ Առաքելյանի՝ 20 գրաֆիկական աշխատանքներով: Նվիրատվությունն իրականացվել է գեղակաղեմիայի ղեկավարության որոշմամբ՝ ռեկտոր Արամ Իսաբեկյանի նախաձեռնությամբ եւ առաջարկով:

ՀԱՊ-ը հարուստ է Խոջաբեկյանի եւ գեղանկարչական, եւ գրաֆիկական հավաքածուով, իսկ Սեդրակ Առաքելյանի գրաֆիկական գործերից քչերն են ներկայացված: Պատկերասրահի 2-րդ հարկի ձախակողմյան ցուցասրահը երեկվանից այցելուին դիմավորում է այս նոր նվիրատվության հետաքրքրական էքսպոզիցիայով:

Սեդրակ Առաքելյանի գրաֆիկական, ըստ էության, նորահայտ այս գործերը սեւ եւ գունավոր մատիտանկարներ են, մարդկային ֆիգուրների ճեպանկարներ («Նստած ծեր կինը», «Բնորդ»), ինքնանկարներ, ջրաներկ բնանկար-էսքիզներ («Աղջիկը ծաղիկներով», Ճանապարհին», «Սեւան» եւ այլն):

Վանո Խոջաբեկյանի 12 գծանկարները թեմատիկ-սյուժետիկ պատկերներ են, սեւամատիտ թույլ նրբագծերով, բոլոր գործերը՝ պատմողական նկարագրով, ապրած միջավայրի, ժամանակաշրջանի, մարդկային բարքերի ու սովորույթների արտահայտություններ են՝ ընդգծված կերպարային լուծումներով («Աքլորակոիվ», «Շատախցի զինվորները», «Բոնցքամարտ», Գաղթականների պարը ապաստարանում», «Զատիկի առևտուր» եւ այլն):

ՀԱՊ-ի գրաֆիկայի բաժնի վարիչ Վիկտորյա Բաղայանը անդրադարձավ Նյու Յորքի ցուցասրահներից մեկում 1942-ին հնագետ եւ արվեստագետ Հարություն Ղազարյանի հավաքածուի ցուցադրությանը, որտեղ ներկայացված են եղել նաեւ Վանո Խոջաբեկյանի գծանկարներից: Ասում են՝ ցուցասրահ մտած Արշիլ Գորկին նրա գործերի առաջ խոնարհվել է: 1966-ին Հարություն Ղազարյանը Խոջաբեկյանի գծանկարային 35 աշխատանք նվիրել է պատկերասրահին, եւ նույն տարվա ապրիլի 30-ին բացվել է ցուցահանդես:

Պատկերասրահի հավաքածուների հարստացման հիմնական ճանապարհներից մեկը նվիրատվությունն է: Ինչպես նկատեց ՀԱՊ տնօրեն Փարավոն Միրզոյանը, տասնամյակների իր պատմության մեջ ազգային պատկերասրահի այս նվիրատվությունն աննախադեպ է, Հայաստանի որեւէ պետական կառույցի, այն էլ ուսումնական հաստատության կողմից նման երեւոյթ չի արձանագրվել:

Պատկերասրահի աշխատակցուհին հույս հայտնեց, որ այս օրինակը վարակիչ կարող է լինել:

Իսկ նկարներն իրենց պատմությունն ու յուրահատուկ ճակատագիրն են ունեցել: Երկար ժամանակ մոռացության էին մատնված եւ գտնվեցին վերջերս՝ առաջին հարկից գեղարվեստի ակադեմիայի գրադարանի տեղափոխման ժամանակ, հին գրապահարանների հետեւից: Ակադեմիայի ամենաավագ դասախոսներն անգամ դրանց գոյության մասին լուր չունեին: Գտնված նկարները պատմական ու գեղարվեստական արժեք են ներկայացնում. դրանց մեջ ռուսական օֆորտիստների գործեր կային, Մալյալինի գծանկարներից, Սեդրակ Առաքելյանի եւ Խոջաբեկյանի գրաֆիկական վերոնշյալ գործերը, իսկ ամենացնցողը Ռեմբրանդտի 40 օֆորտներն էին... Փորձագետները, սակայն, հաստատեցին դրանց օրիգինալ չլինելը, շուրջ 150 տարվա այս գործերը, սակայն, արված են բարձր վարպետությամբ. բնօրինակից գրեթե չտարբերվող եւ լավ պահպանված են:

«Հայաստանի ազգային պատկերասրահը մեր ամենամեծ եւ արժեքավոր թանգարանն է, որտեղ ներկայացված են մեր մշակույթի գոհաները: Առհասարակ գծանկար աշխատանքներն ու գրաֆիկական գործերը դժվարությամբ են պահպանվում եւ ցուցադրության հատուկ ռեժիմ են պահանջում: Ազգային պատկերասրահին դրանք նվիրելու իմ առաջարկը Ակադեմիան ընդունեց սիրով: Այսպիսի աշխատանքներ էլի կան, որոնց նվիրատվության ժամանակն էլ կգա: Եվ սա որեւէ անձի, ղեկավարի հետ կապված չէ: Չնայած միայն հորս հիշատակը բավական էր ազգային պատկերասրահին x'ghm նվիրելու իմ այս որոշման համար», ցուցահանդեսի բացումից առաջ ասաց Արամ Իսաբեկյանը:

Մելանյա Բադալյան

https://www.azg.am/index_wap.php?nl=AM&id=2010032017&Base_PUB=0